

«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

*Ավարտական հետազոտական
աշխատանք*

Թեմա՝ Բանահյուսության ուսուցումը հիմնական դպրոցում

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսուցիչ՝ Հովհաննիսյան Սուսաննա

Դպրոց՝ «Երևանի Խ.Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ Թամարա Թովմասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1.Բանահյուսական ժանրերն ու դրանց առանձնահատկությունները.....	5
2.Առակների ուսուցման դաստիարակչական նշանակությունը.....	7
3.Առածների և ասացվածքների ուսուցման-ուսումնասիրման նպատակները.....	10
4. Ժողովրդական երգերն ու խաղիկները դպրոցում.....	16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդական բանահյուսությունը ազգային արժեքի մի մասն է, որը, սերնդեսերունդ փոխանցվելով, բյուրեղացել, հասել է մինչև մեր օրերը՝ ձևավորելով ու ամբողջացնելով այն կրողների ազգային դիմագիծը և հարուստ նյութ հանդիսանալով ինչպես ժամանակակից գեղարվեստական գրականության, այնպես էլ պատմագրության և արվեստի մյուս ճյուղերի զարգացման համար: Բանահյուսությունը գրավոր գրականությունից տարբերվում է չորս հիմնական տարրերով՝

- **բանավոր գոյությամբ** (բանահյուսական ստեղծագործությունները ապրում են ժողովրդի հիշողության մեջ և փոխանցվում են բանավոր՝ բերնեբերան),
- **հանրային բնույթով** (բանահյուսական ստեղծագործության ձևավորմանն ու տարածմանը մասնակցում է ժողովուրդը),
- **տարբերակների առկայությամբ** (բանահյուսության ցանկացած տեսակ ունի բազում տարբերակներ. ինչքան՝ ասացող, այնքան՝ տարբերակ)
- **միաձուլությամբ** (բանահյուսական մի շարք տեսակներ իրենց մեջ ներառում են տարատեսակ սեռեր ու ժանրեր՝ համադրելով թե՛ թատերականը, թե՛ ազգագրական-ժխականը, թե՛ երաժշտարվեստի ու պարարվեստի արտացոլանքները):

Բանահյուսության մեջ իրենց ուրույն կարևորությամբ ու գեղեցկությամբ աչքի են ընկնում ժողովրդական խաղիկներն ու երգերը, առակներն ու հեքիաթները, հանելուկները, առածներն ու ասացվածքները, նաև էպոսը, որոնց մեջ ամփոփված են ժողովրդի ապրումներն ու զգացմունքները, երազանքներն ու իղձերը: Սրանք արտացոլում են հոգեբանական ու կենցաղային տարբեր իրավիճակներ, ազգային նկարագրի տարրեր: Բանահյուսությունն իրական կյանքի արտացոլանքն է և իր կարևորագույն ազդեցությունն է ունեցել ժողովրդի աշխարհընկալման, աշխարհայացքի ձևավորման, բարքերի, ավանդույթների վրա՝ դառնալով հասարակության համար հոգևոր և բարոյական արժեքների հսկայական շտեմարան: Ժողովրդական բանահյուսությունը աշխարհը հասկանալու, ճանաչելու միջոց է, ոգու և անհատականության դաստիարակության հզոր աղբյուր: Բազմաթիվ գրողներ իրենց

ստեղծագործություններն ավելի նկարագրական ու բովանդակային դարձնելու համար մեծապես օգտվել են հայ ժողովրդական բանահյուսությունից, կատարել առանձին մշակումներ: Ժողովրդի խոսքն ու գրույցը դարձնելով գրական նյութ՝ բանաստեղծներն ու գրողներն իրենց ստեղծագործություններով ավելի են մոտեցել ժողովրդին՝ արտացոլելով վերջինիս ամենամուրբ ու նվիրական զգացմունքները: Նկատենք, որ բանահյուսական նշված ժանրերն ունեն նաև անփոխարինելի ուսումնական ու դաստիարակչական նշանակություն մատաղ սերդի համար, ուստի ուսումնական ծրագրերում դրանց տարատեսակների ներառումը մեծապես օգնում է սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, ազգային ու հայրենասիրական դաստիարակությանն ու լեզվամտածողության զարգացմանը:

Հետազոտության արդիականությունը: Ներկայիս կրթական համակարգը ենթադրում է, որ սովորողը գիտելիքից բացի պետք է ձեռք բերի նաև արժեքներ, վերաբերմունք ու դիրքորոշում: Այս համատեքստում կցանկանանք առանձնակի կարևորել բանահյուսության դերը՝ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության համատեքստում: Հենց այս հանգամանքի անհրաժեշտության կարևորմամբ էլ պայմանավորել ենք մեր հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է բացահայտել բանահյուսական ստեղծագործությունների արդյունավետ ուսուցման հնարավորությունները հիմնական դպրոցում: Սույն աշխատանքի շրջանակներում քննարկվող խնդիրները հետևյալներն են.

- Ուսումնասիրել համապատասխան ակադեմիական գրականություն, հանրակրթական ոլորտի օրենսդրություն:
- Ընդգծել հայ բանահյուսական գոհարների դերն ու նշանակությունը մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում:
- Դիտարկել հիմնական դպրոցում բանահյուսական ստեղծագործությունների ուսուցման արդյունավետ մանկավարժական պայմանները:

1. Բանահյուսական ժանրերն ու դրանց առանձնահատկությունները

Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է, նրա հավաքական բանականության և հավաքական հույզի արգասիքը: Սկիզբ առնելով անհիշելի ժամանակներից՝ այն հաստատուն առաջ է շարժվել, մտել ամեն քաղաք ու գյուղ, բակ ու տուն: Իր մեջ ներառելով ժողովրդի աշխարհընկալումը, դարավոր կենսափորձն ու իմաստությունը՝ հայ ժողովրդական բանահյուսությունն այսօր հասել է մեզ՝ իր բազմաժանր ու բազմաբովանդակ դրսևորումներով: Բանահյուսությունը փոխանցվում է բերնեբերան, սերնդեսերունդ ավանդվում՝ իր հետ բերելով անցյալի թաքուն ու բացահայտ կողմերը, զգացմունքներն ու հյույզերը: Ժողովրդական խոսքի հորինողներին անվանում ենք պատմող, ասացող, գուսան, աշուղ: Բանահյուսության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ խորապես ազգային է, ազգային ինքնության նախահիմքն է: Այստեղ է երևում յուրաքանչյուր ժողովրդի ազգագրական յուրահատկությունը:

Հայոց բանահյուսությունը սկզբից ևեթ ունեցել է մեկ գլխավոր ուղղվածություն՝ հայրենասիրություն: Հայրենասիրական բնույթ ունեն մեր առասպելները, վիպական երգերը և մյուս բոլոր ստեղծագործությունները¹: 19-րդ դ. կեսերին եվրոպական առաջավոր երկրների մտքի ազդեցությամբ հայ մտավորականությունը ևս կարևորեց մեր ժողովրդի բանավոր ավանդության տարբեր ժանրերի գրառման, հրատարակման և ուսումնասիրման պատմամշակութաբանական անհրաժեշտությունը: Այդ գործում իրենց մեծ ավանդն ունեցան հայ մշակույթի մի շարք երախտավորները՝ Գ. Սրվանձտյանց, Մ. Աբեղյան, Գ. Շերմազանյան, Մ. Բարխուդարյան, Գ. Ղափանցյան, Ա. Ղանալանյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Ս. Հարությունյան, Կոմիտաս և այլք, ովքեր կարողացան կորստից փրկել հայ ժողովրդի բանավոր մշակույթի գանձերը և գիտական հիմքերի վրա դնել դրանց ուսումնասիրությունը: Հայ ժողովրդական բանահյուսության հավաքման և հետազոտման գործընթացը սկզբնավորվում է Գ. Սրվանձտյանցով («Գրոց ու բրոց և Սասունցի Ղավիթ կամ Միերի դուռ», 1874), ով առաջ բերեց բանահավաքչական մեծ շարժում: Բանահյուսությունն ընդհանրապես ազգային գիտության ու մշակույթի հիմքն է, գրականությունից բացի՝ ազգագրության, պատմագրության, լեզվաբանության, հավատալիքների, սովորույթների, կենցաղի,

¹ Դ. Գասպարյան, Հայ բանահյուսությունը:

<https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hayoclezu%20&%20grakanutyun/2013%284%29.pdf>

ծեսերի, հմայությունների, ինչպես նաև երաժշտական արվեստի: Վերջին դեպքում չնոռանանք, որ երաժշտական ստեղծագործություններն ունեն նաև բառային ատաղծ: Կոմիտասը հավաքեց և մշակեց ժողովրդական երաժշտական գանձերը: Բանահյուսական հիմք ունեն Արամ Խաչատրյանի «Երկրորդ նվագ»-ը, Առնո Բաբաջանյանի «Վաղարշապատի պար»-ը և այլ ստեղծագործություններ: Լեզվաբանության կապակցությամբ ավելացնենք, որ բառաշերտերի ստուգաբանական ծագումնաբանությունից զատ այստեղ հույժ կարևոր է բարբառը: Տարբեր ժողովուրդների գրողներ պատմական տարբեր ժամանակաշրջաններում դիմել են ժողովրդի բանավոր ստեղծագործությանը, նյութ քաղել նրանից, օգտագործել նրա թեմաները, մոտիվները, արտահայտչական միջոցները, լեզուն ու ստեղծագործական մեթոդը»²:

Բանահյուսությունը զարգացել է մարդկության գիտակցական գործունեության ամենասկզբից՝ հենց նախնադարյան համայնական հասարակարգից, անցել է ստրկատիրական, ավատական, բուրժուական պատմական հսկայական ժամանակահատված և եկել հասել է քաղաքակրթության ներկա փուլին: Բանահյուսությունն սկսել է պարզ տեսակներից, հետագայում ընդլայնել է իր տեսականին: Բանահյուսության սեռերն ու տեսակներն արտակարգ հարուստ են և իրենց մեջ ընդգրկում են բանավոր խոսքին բնորոշ բոլոր դրսևորումները: Բանահյուսության տեսականին ներկայացնել՝ նշանակում է առանձնացնել ձևիմաստային հետևյալ խմբավորումները.

- I. Պատմողական երկեր: Թվեյաց երգեր: Դիցաբանական զրույց: Առասպել: Լեգենդ: Ավանդություն: Հեքիաթ: Դյուցազներգություն: Վիպական երգեր: Առած-ասացվածքներ: Անեկդոտ:**
- II. Քնարական երկեր: Ժողովրդական երգեր՝ սիրերգեր, պարերգեր, հարսանեկան երգեր, թաղման ու սգո երգեր, կենցաղային ու ծիսական երգեր, աշխատանքային երգեր, օրորոցային երգեր, վիճակի երգեր, պանդխտության երգեր: Հայրեններ: Խաղիկներ: Անտունիներ:**
- III. Քնարապատմողական երկեր: Առակ: Հանելուկ**
- IV. .Թատերգական երկեր: «Երգս պարուց», «Երգս զցուց»**

Սեռն ինչպես բանահյուսական, այնպես և գեղարվեստական

² Ա. Ղանալանյան, Հայ գրականությունը և բանահյուսությունը, Եր., 1985, էջ 5:

ստեղծագործությունները տարբերակող ամենամեծ ձևիմաստային բաժանումն է: Սեռերն իրարից տարբերվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հատկանիշերով: Ըստ այդմ՝ բանահյուսական սեռերը երեքն են՝ պատմողական, քնարական և թատերգական: Պետք է ցավով նշել, որ այսօր հասարակության մեջ բանահյուսությունը կամաց-կամաց կորսվում է, այն պահպանվել է հիմնականում մի քանի դրսևորումներով՝ անեկդոտ, իմաստախոս առակ կամ այլասացություն, օրինանք, անեծք, հայիոյանք: Ուստի այս համատեքստում կցանկանանք կարևորել դպրոցի դերը, որը մատաղ սերնդին հաղորդակից է դարձնում ազգային մշակույթի այս անձեռակերտ գանձարանին՝ այդպիսով նպաստելով վերջիններիս հայրենաճանաչությանն ու հայրենասիրության խթանմանը: Կարծում ենք, որ այսօրվա սովորողն իրապես կարիք ունի բանահյուսական խոսք ու զրույցով դաստիարակվելու, ուստի հարկ ենք համարում նկատել, որ ավելորդ չէր լինի, եթե բանահյուսությունն ուսումնական ծրագրերի մեջ ներարռվեր և ունենար ուսումնական առանձին առարկայի կարգավիճակ:

2. Առակների ուսուցման դաստիարակչական նշանակությունը

Հայ ժողովուրդը մտածող, ստեղծարար ժողովուրդ է: Այդպես եղել է դարեր ի վեր, այդպես է և այսօր: Այս պնդումը հիմնված է մեր բազմադարյան գրականության, բանահյուսական անգին պատարիկների գոյության վրա, այլ խոսքով՝ մեր մշակույթի ու մեծարժեք ձեռագիր մատյանների գոյությունն է մեր իմաստնության հենասյունը: Այդ իմաստնությունը մեծապես արտացոլվել է ժողովրդական ասացվածքներում, առածներում, հեքիաթներում, ինչպես նաև առակներում: Առակի գեղարվեստական ժանրը դարերի ընթացքում մուտք է գործել նաև հայ ժողովրդի գեղարվեստական գանձարանը և դարձել նրա անքակտելի մասը: Իսկ ի՞նչ է առակը, ո՞րն է այս գրական տեսակի արժեքը, առաքելությունը, բովանդակային առանձնահատկությունը: Պարզապես պատմություն՞՝ այլաբանական հնարքներով, թե՞ այս փոքրածավալ ստեղծագործության իրական նշանակությունն ավելի խորն է ու բովանդակային: Առակը խոսքի արտահայտման այնպիսի ձև է, որն ասելիքը բացատրում և ներկայացնում է առանձին, մի օրինակի միջոցով կատարված ընդհանրացմամբ: Հենց այդ օրինակի միջոցով է հեղինակը վեր հանում ժամանակի՝ ոչ դրական, դատապարտելի ու մերժելի իրողությունները, հաճախ ծաղրում, համեմուն այլաբանությամբ: Եզրափակիչ՝ խրատական հատվածում արդեն սուր ու տեսանելի շարադրանքով մերժում ու պարսավում է այս կամ այն իրողությունը՝ փորձելով հանրույթին ցույց տալ կյանքն իր ողջ գույներով, ընթերցողի առաջ բացել մարդկային էության զագրելի, տհաճ ու դատապարտության արժանի կողմերը: Այլ խոսքով՝

առակը մի պատմություն է, զրույց, որից կատարվում է համապատասխան բարոյական եզրահանգում: Առակի պամոդական մասը ժանրային առումով նրան մոտեցնում է հեքիաթին, հատկապես հրաշապատում-կենդանական հեքիաթին, սակայն առակի ժանրային առանձնահատկությունը ամփոփված է հենց խրատական հատվածում՝ «առակս ինչ կցուցանե»: Առակներն իրենց դրական ազդեցությունն են ունենում դպրոցականների բարոյական դաստիարակության վրա: Ռուս մանկավարժ Կոնստանտին Դմիտրևիչ Ուշինսկին դաստիարակությունը բնորոշում է որպես ներդաշնակորեն զարգացած անձնավորության ձևավորմանը նպատակաուղղված գիտակցական պրոցես: Դաստիարակության տարբեր կողմերի շարքում նա գլխավոր տեղը հատկացնում է բարոյականության դաստիարակությանը, որովհետև, ըստ նրա՝ բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի մարդասիրություն, ազնվություն և ուղղամտություն, աշխատասիրություն, կարգապահություն և պատասխանատվության զգացում, որը զուգակցվում է համեստության հետ: Դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի ամուր բնավորություն և կամք, տոկունություն, պարտքի զգացում³: Այս ամենից ելնելով՝ կարող ենք արձանագրել, որ առակներով կարելի է ուղղորդել, սովորեցնել, ստիպել, որ ընթերցողը դուրս գա շարադրանքից ու եզրահանգումներ կատարի, բանավիճի, հայտնի սեփական կարծիքը: Այս առումով տեղին է նշել, որ առակների ուսուցումը, դրանց իմաստի ընկալումն ու հիմնական մտքի բացահայտումը բավականաչափ արդյունավետ է հենց կրթական նպատակներ իրականացնելու առումով: Անշուշտ, առակի ժանրային առանձնահատկությունից բխող խրատական մասը՝ որպես կրթադաստիարակչական մի ուրույն գործիք, ունի մեծ արժեք:

Ստացվում է, որ բովանդակության հաղորդմամբ խթանվում է դպրոցականի ընթերցելու կարողությունը, իսկ խրատական հատվածը թույլ է տալիս, որ սովորողի մոտ զարգանա ինքնուրույն դատողություն անելու, պատկերավոր մտածելու կարողությունները: Առակների ուսուցումը մեծապես օգնում է նաև կապակցված խոսքի զարգացմանը: Այս ընթացքում զարգանում է թե՛ մենախոսելու, թե՛ երկխոսելու կարողությունները, սովորողը սկսում է ինքնուրույն եզրահանգումներ կատարել, սովորում է դասդասել դրականն ու բացասականը, լավն ու վատը: Առակի բարոյախրատական հատվածը նպաստում է բարեվարքության, աշխատասիրության, բարության ու մի շարք այլ դրական հատկությունների, պետքական հմտությունների ու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Կրտսեր դպրոցում, սկսած առաջին դասարանից, ուսուցանվում են ժողովրդական բանահյուսության անգին

³ Ушинский К.Д. Педагогические идеи. – М.; 1971.

նմուշներ՝ առած-ասացվածքներ, հեքիաթներ, շուտասելուկներ, սուտասելուկներ և այլն: Առակի ուսուցումն առանձնահատուկ տեղ ու դեր ունի մայրենիի դասընթացում, քանզի անգնահատելի է առակի թե՛ ուսուցողական և թե՛ դաստիարակչական նշանակությունը: Առակների միջոցով է, որ կրտսեր դպրոցականը ընկալում է մայրենի լեզվի բարձրարժեքությունը:

Առակների ուսուցողական արժեքը անչափ կարևոր է սովորողի համար, քանի որ առակում առկա բարոյախոսական հատվածը լիարժեք կատարում է իր գործառույթը՝ ստիպելով սովորողին մտածել: Շատ ավելի դյուրըմբռնելի ու պարզ է դառնում առակի հիմնական միտքը սովորողի համար, եթե աշխատանքը զուգորդվում է առակի թեմային վերաբերող առածների, ասացվածքների կիրառմամբ: Վստահաբար կարող ենք արձանագրել, որ առակների դասավանդումը անչափ կարևոր է, քանի որ այս ստեղծագործության հիմքում ընկած է դաստիարակության, բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ ձևավորելու, սովորողի մոտ բնավորության վատ գծերն ու թերությունները վերացնելու միտում: Դաստիարակության թերությունները չափազանց դժվար է հաղթահարել հետագա տարիներին, իսկ դաստիարակության բացթողումները կարող են պատճառ դառնալ անհատական զարգացման՝ օնտոգենեզի բացասական հետևանքների: Դրա համար ժամանակակից տարրական դպրոցում սկսել են առանձնակի ուշադրություն դարձնել հատկապես դաստիարակության խնդիրներին⁴:

«Հասկացողին մինն ասա, չհասկացողին՝ հազար ու մի», գուցե այս ասացվածքով կարելի է էլ ավելի շեշտադրել առակի խրատական առանձնահատկությունները, որոնց շնորհիվ դարեր շարունակ սերունդներ են կրթվել, առակի ցույց տված ճիշտ ուղով քաղաքակրթություններ են ձևավորվել ու դաստիարակվել: Առակի բարոյախոսական գաղափարը, հենվելով ծաղրի, քննադատության, լավի ու վատի համեմատության վրա, էլ ավելի է ընդգծել մարդկային հասարակության արատները՝ անուղղակի կերպով դատապարտելով դրանք: Առակը երբեք էլ չի դիտարկվել որպես հրաշապատում հեքիաթ կամ զարմանահրաշ պատմություն. այս գրական ժանրը միշտ էլ իր ընթերցողին կրթելու, դաստիարակելու, խորհուրդ տալու ու բացասականը մատնացույց անելու առաքելություն է ունեցել: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ առակի ուսուցումը

⁴ Землянская Е. Н., Теория и методика воспитания школьников: учебник и практикум для СПО. М., издательство Юрайт, 2019, с. 57.

բավականին դրական ազդեցություն է ունենում սովորողի վրա՝ ընդ որում այդ դրական ազդեցությունը համակողմանի է և ունի լայն շրջանակ.

- Նպաստում է սովորողի կարդալու, պատմելու, ոչ մեխանիկորեն վերարտադրելու կարողությունների զարգացմանը:
- Հարստացնում է սովորողի բառային պաշարը:
- Օգնում է սովորողի կապակցված խոսքի բնականոն զարգացմանը:
- Ձևավորում է գեղագիտական ճաշակ:
- Դաստիարակում է կամային բարձր, ազնիվ հատկանիշներ:
- Նպաստում է սովորողի ինքնուրույն կարծիքի, դիրքորոշման անկաշկանդ արտահայտմանը:
- Զարգացնում է պատկերավոր մտածողությունն ու ստեղծագործական միտքը:
- Սերմանում է բարեվարքություն, բարություն, լավի ու վատի սահմանը տարբերակելու իմացություն:
- Խրախուսում է ընթերցանությունը:
- Զարգացնում է դասդասելու, այս կամ այն իրողությունը հատկանշավորելու, տարբերություններ ու նմանություններ գտնելու կարողություն:

Անշուշտ, վերը թվարկած հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է վարում դասը՝ հաշվի են առնված սովորողների անհատական պահանջմունքները, դասը հագեցած է դիդակտիկ նյութերով ու զննական պարագաներով, դասին կիրառվում են մի շարք ակտիվ մեթոդներ, որոնք կարող են ոգևորել սովորողին ու պահել ակտիվ դաշտում:

3.Առաժների և ասացվածքների ուսուցման-ուսումնասիրման նպատակները

Ինչպես նշեցինք, շատ բազմազան են ժողովրդական բանահյուսության տեսակները՝ էպոս, հեքիաթ, առակ, մանրապատում ստեղծագործություններ՝ հանելուկ, ասացվածք, առած, շուտասելուկ ու սուտասելուկ, խաղիկ և այլն: Այս ժանրերից յուրաքանչյուրն ունի իր բովանդակության, կառուցվածքի և պատկերավորման բավական կայուն յուրահատկություններ, որոնք մշակվել են և դարձել մեծ ընդհանրացումների հիմք: Ժողովրդական մանրապատումների հեղինակը ժողովուրդն է, որ ստեղծել է բանավոր անգիր ստեղծագործությունների ամբողջություն՝ ներկայացնելով իր կյանքի ու անցած ճանապարհի առավել կարևոր դեպքերն ու իրադարձությունները, իր պատկերացումներն ու ըմբռնումները շրջապատող աշխարհի, բնության մասին: Հայկական առածները ստեղծվել և պահպանվել են հայ ժողովրդի գոյության բոլոր ժամանակաշրջաններում: Որևէ

առաժի ծագումնաբանությունը պարզելը բարդ է կամ անհնարին: Առաժները և ասացվածքները հայ ժողովրդական բանահյուսության ամենահին և հարուստ ժանրերից մեկն են: Հայկական առաժների առաջին բուն ժողովրդական հավաքածուն թողարկվել է 1859 թվականին՝ Թիֆլիսում, «Մեղու Հայաստանի» թերթում: Առաժների հավաքագրման աշխատանքը ավելի ակտիվանում է 1880-1900-ական թվականներին: 1951-ին հրատարակվում է Արամ Ղանալանյանի «Առաժանի» համավահավաք ժողովածուն, որը պարունակում է շուրջ 40000 հայկական առաժներ⁵: Առաժներն ու ասացվածքներն ամփոփում են ժողովրդի կենսափորձը, ինքնությունը, իմաստնությունը և հսկայական դեր են կատարում դպրոցականների արժեհամակարգի ձևավորման առումով: Սովորողների մեջ ուսման հանդեպ հետաքրքրություն և սեր առաջացնելու, նրանց համագործակցության մղելու համար ուսուցիչը պետք է քաջատեղյակ լինի ժողովրդական առաժների, ասացվածքների, հանելուկների և թևավոր խոսքերի հարուստ պաշարին և դրանք մեկնաբանելու կարողություն ունենա: Մայրենիի գրեթե յուրաքանչյուր դասի հետ կարելի է մատուցել ժողովրդական այդ պարզ, հակիրճ, բայց բովանդակալից ստեղծագործությունները՝ կապելով դասի հիմնական թեմայի հետ՝ որպես լրացուցիչ նյութեր: Դրանք պարզաբանում, առավել ցայտուն են դարձնում հիմնական բնագրի որևէ կողմը կամ խորացնում ու ամբողջացնում դրանց գլխավոր միտքը: Սովորողներին պետք է սովորեցնել գործնականորեն դրանք տարբերել իրարից, վերլուծել ըստ բովանդակության, անգիր սովորել և օգտագործել խոսքի մեջ: Մանրապատումները իրենց բովանդակությամբ խիստ հակիրճ ձևով մայրենի լեզվի և հայերեն մտածողության վառ օրինակներ են: Ոչ մի այլ բանով ավելի լավ, քան ժողովրդական մանրապատումների միջոցով, հնարավոր չէ երեխաների մտածողության վրա ազդել, նրանց դատողական խոսքը զարգացնել: Ժողովրդական մանրապատումներում արտացոլված է ժողովրդի կյանքը իր սքանչելի և հետաքրքիր առանձնահատկություններով, նրանցում արտացոլված են ժողովրդի կյանքի և կենցաղի բոլոր կողմերը, հասարակական կյանքի երևույթները՝ չարն ու վատը, բարին ու լավը: Առաժները չհնացող գրական տեսակներից են, որոնք օգնում են առավել ընկալելի, առավել ճշգրիտ արտահայտել միտքը, դրանց հատուկ են խոսքի պարզությունը և քիչ խոսքով շատ բան ասելու յուրօրինակ տեսակը:

Առաժը խրատական բնույթ ունեցող, իմաստալից համառոտ խոսք է, որում արտահայտվում է ժողովրդական կենսափորձը: *Ասացվածքները* ժողովրդական փիլիսոփայական ժանրի ստեղծագործություններ են: Կյանքի որևէ երևույթ բնորոշվում

⁵ Ա. Ղանալանյան, «Առաժանի», Երևան, 1960:

է դիպուկ և հակիրճ խոսքով: Ասացվածքը առածից տարբերվում է նրանով, որ միտքն արտահայտում է ուղղակի, առանց միջնորդավորման, առանց այլաբանության: *Ասացվածքը* ժողովրդական կարճ և հասկանալի բանավոր մանրապատում է, որը հակիրճ բնութագրում է կյանքի տարբեր երևույթներ: Ասացվածքների միջոցով արտահայտվում է ժողովրդի տեսակետը, նրա հայացքները հարաբերությունների, մարդու լավագույն կոչման և այլ հարցերի վերաբերյալ: Ասացվածքներ կան գրեթե բոլոր ժողովուրդների բանահյուսության մեջ: Դրանք մարդուն դաստիարակելու լավագույն պատվիրաններն են: Առածներն ու ասացվածքները ժողովրդական բանահյուսության ժանրի սեղմ ասույթներ են, որոնք ունեն բարոյախրատական և դիդակտիկ բնույթ: Առածների ու ասացվածքների միջոցով սերնդեսերունդ փոխանցվում է տվյալ ժողովրդի լեզվամտածողության, մշակույթի, կենցաղի և այլ բնագավառներին վերաբերող տեղեկատվություն⁶:

Առածներն ու ասացվածքները պատրաստի լեզվական միավորներ են, որոնք ստեղծվել են դարերի ընթացքում, հարյուրամյակներ շարունակ ժողովրդի մտածողության մեջ ու նրա շուրթերին հղկվել և ինչ-որ չափով մշակվել, կայունացել ու բյուրեղացել են: Առածները պատկերավոր այլաբանություններ են, ժողովրդական մանրապատում ստեղծագործության տեսակներից մեկը, փոքր ծավալի բանահյուսական գրական տեսակ, պարզ ու պատկերավոր, խրատական բնույթ ունեցող իմաստալից ասույթ, որ ունեն ուղղակի և փոխաբերական իմաստ: Կյանքի յուրաքանչյուր երևույթ նրանում բնութագրվում է սրամտորեն: Առածները վերաբերում են մարդկային հարաբերություններին, ներկայացնում են ժողովրդի հոգեբանությունը, մտածողությունն ու աշխարհայացքը, բարոյական չափանիշները, ազգային առանձնահատկությունները, սովորույթները, հավատալիքները և այլն: Առածների ու ասացվածքների համար որոշ չափով նյութ է տվել նաև գրականությունը, որտեղից խրատական, բարոյախոսական և այլ կարգի թևավոր արտահայտություններ տարբեր ճանապարհներով անցել են ժողովրդին:

Օրինակ՝ «*Արջն իր ահից կգորռա*» հայկական առածը ծագել է խոր հնադարում, հիշատակվում է նաև Եղիշեի պատմության մեջ և նշանակում է, թե մարդը օրհասի ժամանակ դրսևորում է իր ներքին բոլոր ուժերը: Ստեղծվելով հնագույն ժամանակներում՝ այսօր էլ առածը պահպանում է իր գործնական նշանակությունը և լայն կիրառություն ունի կենդանի խոսքում, օգնում է առավել ընկալելի, առավել ճշգրիտ արտահայտել միտքը: Առածները քիչ բառերով մեծ բովանդակություն են

⁶ Նույն տեղում, էջ 16

հաղորդում, ունեն ճանաչողական և դաստիարակչական մեծ արժեք, ինչպես՝ «Ով ալարի, ոչ դալարի», «Տաշած քարը գետնին չի մնա», «Անվախը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար», «Ուրիշի համար փոս փորողը ինքն է ընկնում մեջը», «Լավութուն արա, ջուրը գցիր» և այլն⁷: Առածներն ունեն երկու կողմ. արտաքին՝ գրական-գեղարվեստական և ներքին՝ բարոյախրատական: Այստեղից հետևում է, որ յուրաքանչյուր առած արտահայտում է երկու իմաստ՝ ուղղակի և անուղղակի կամ՝ այլաբանական: Օրինակ՝ «Գայլի մահը ոչ ոքի չի վշտացնում» առածի իմաստը պիտի հասկանալ ոչ միայն ուղիղ իմաստով, այլև փոխաբերական. *գայլի նման ազահ, ընչաքաղց մարդկանց ոչ ոք չի հարգում կամ մահը սգում*: Նույն ձևով և՛ «Արջն անտառից խռովել է, անտառը խաբար չունի», «Անտառն առանց գայլի չի լինի», «Գայլն ընկավ ոչխարի մեջը, վա՛յ մեկի տիրոջը»⁸ և այլ առածների մեջ պիտի փնտրել նաև այլաբանական իմաստներ: Այլաբանական իմաստներ ունեն նաև՝ «Կուժ, քեզ ասեմ, կուլա, դու լսիր», «Գեղ կանգնի, գերան կկոտրի», «Պտուղը ծառից հեռու չի ընկնի», «Զուրն իր ճամփան կգտնի:», «Շան բնի կողքին աղվես չի ապրի», «Ածան հավը կջկջան է լինում», «Աղվեսն իր պոչն է վկա բերում», «Արջը յոթ երգ գիտի, յոթն էլ տանձի մասին» և այլն:

Առածներով հարուստ են մանկական բանաստեղծությունները, պատմվածքներն ու հեքիաթները, ուստի ճիշտ ու տեղին մեջբերված առածը ուսուցչի խոսքը դարձնում է կենդանի՝ ստեղծելով աշխույժ գրույցի համար նպաստավոր մթնոլորտ ոչ միայն աշակերտների, այլև մեծահասակ ու փորձառու ունկնդիրների միջավայրում: Առածները սովորողների մոտ կարող են դաստիարակել աշխատասիրություն, միասնություն, հայրենասիրություն և այլ հատկանիշներ:

Ասացվածքները տարբերվում են առածներից նրանով, որ ունեն միայն ուղղակի իմաստ՝ առանց այլաբանական հնարների ու փոխաբերական պատկերների: Օրինակ՝ «Համեստությունը զարդարում է մարդուն», «Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես», «Աշխատանքը ազնվացնում է մարդուն» և այլն: Ասացվածքներում արտահայտվել են ժողովրդի կենսափիլիսոփայությունը, նրա ըմբռնումներն ու պատկերացումները կյանքի տարաբնույթ հարցերի, մարդկային հարաբերությունների, ազգային արժեքների և այլ հարցերի մասին: Լինում են հիմնականում խրատական-դաստիարակչական բովանդակության: Օրինակ՝ «Մոտիկ հարևանը հեռու բարեկամից լավ է», «Հասկացողին մին ասա, չհասկացողին՝ հազար ու մին», «Թոկի

⁷ Նույն տեղում էջ 20:

⁸ Նույն տեղում, էջ 16:

երկարն է լավ, խոսքի կարճը», «ժամանակը ոսկի է», «Համբերությունը կյանք է», «Քեֆ անողին քեֆ չի պակսի», «Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա», «Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է», «Աչքը տեսածից կվախենա» և այլն: Ասացվածքներն իրենց հետ բերում են ժողովրդական ոգի և գործածվում են առտնին, մտերմիկ խոսքում: Օրինակ՝ *«Այսօրվա գործը վաղվան մի թողնի»* ասացվածքը, որ կա գրեթե բոլոր ժողովուրդների բանահյուսության մեջ, հասկացվում է որպես իմաստուն խորհուրդ, մարդու մեջ աշխատասիրություն դաստիարակելու լավագույն պատվիրան: Թե՛ առածները, թե՛ ասացվածքները խոր իմաստ ունեցող խրատական կարճ արտահայտություններ են, որ իրենց ձևով ու բովանդակությամբ երեխաներին հայոց լեզվի և հայերեն մտածողության գեղեցիկ օրինակներ են տալիս: Ինչպես Ուշինսկին է ասում, դրանք *«Մայրենի հարազատ բարբառի կենսաթրթիռ դրսևորում են, որ ուղղակի դուրս են թռչում նրա կենդանի ակունքից՝ ժողովրդի հավերժ ջահել ու հավերժ կենդանի սրտից»*⁹ : Նրանց մեջ արտացոլված է ժողովրդական կյանքն իր բոլոր սքանչելի արտահայտություններով, իր պահանջներով, ձգտումներով ու սովորություններով, իր հայացքներով՝ բնության, մարդկային գործունեության ու կյանքի տարբեր երևույթների վերաբերյալ, ուստի շատ մեծ է դրանց ճանաչողական ու բարոյադաստիարակչական արժեքը:

Օրինակ՝ *«խորամանկ աղվեսը չորս ոտքով է թակարդն ընկնում», «Ինչ որ ցանես, այն կհնձես», «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք», «Մի ծաղկով գարուն չի գա, Մի ձեռքը ծախ չի տա», «Գյուղ կանգնի, գերան կկոտրի»* մանրապատումները առածներ են, քանի որ ունեն և՛ ուղիղ իմաստ, և՛ այլաբանական, իսկ *«Համեստությունը զարդարում է մարդուն», «Գործը վարպետից է վախենում», «Մուշտակդ կարիր ամռանը, մանգաղդ սրիր ձմռանը», «Բարի խոսքը հարստությունից լավ է», «Միասնությունը ուժ է»* մանրապատումներն ասացվածքներ են, քանի որ ունեն միայն ուղղակի իմաստ, պիտի հասկանալ այն, ինչ-որ ասվում է: Որքան էլ առածներն ու ասացվածքները պարզ են ու հակիրճ, այնքան իրենց մեջ ասելիքը շատ է: Դրանք ժողովրդական խորը իմաստ պարունակող կոնկրետ մտքեր են, որտեղ կա շատ ասելիք, ծավալուն բովանդակություն, բացատրվելիք և պարզաբանվելիք խոսք:

Որքան էլ մանրապատում ստեղծագործությունները պարզ ու հասկանալի են թվում, այնուամենայնիվ, իրենց մեջ բացատրելու, երեխաներին հասկացնելու որևէ բան ունեն, որովհետև դրանք ժողովրդական խորը իմացություն պարունակող ստեղծագործություններ են՝ արտահայտված պարզ այլաբանությամբ: Ժողովրդական

⁹ Կ. Դ. Ուշինսկի, «Մանկավարժական ընտիր երկեր», Երևան 1981, էջ 403:

մանրապատում ստեղծագործություններից առաձների ու ասացվածքների ուղիղ և այլաբանական իմաստը կարելի է բացատրել առակները ուսումնասիրելիս, որովհետև դրանց զգալի մասը խտացված առակներ են և կրում են ծավալուն բնույթ, առանց կերպարների և գործողությունների: Եվ դրանցում արտահայտված են միևնույն բարոյախրատական նորմերը, ինչ որ տրված է առակներում : «Եթե առաձն ու ասացվածքը օգնում են ճիշտ հասկանալու առակների վերացական բովանդակությունը, ապա առակներն էլ կարող են օգնել հասկանալու առաձների ու ասացվածքների կոնկրետ բովանդակությունը»¹⁰: Ժողովրդական առաձներն ու ասացվածքները պետք է սովորողների գիտակցությանը հասցնել առաջին հերթին գեղեցիկ և արտահայտիչ կարդալու կարողությամբ, իսկ ապա նաև տրամաբանական աշխատանքի միջոցով երեխաներին թույլ տալ ներկայացնել այդ անդամների միջև եղած տրամաբանական կապը: Ժողովրդական մանրապատումները դպրոցականների ամենասիրելի ստեղծագործություններն են: Դրանք լավագույն ընտրանի են իրենց բանաստեղծական պատկերացմամբ, դիպուկ խոսքային հատկություններով: Դպրոց մտած աշակերտի համար սրանք շատ հետաքրքիր տեղեկություններ են, որ օգնում են նրան ճանաչելու շրջապատը, բայց և միաժամանակ կողմնորոշվելու, սիրով լցվելու լավ և օգտակար արարքների նկատմամբ, ասելու չարը, զգուշանալու նրանից, սովորելու նրանց դեմ պայքարել: Այսպես աշակերտի անհատականության ձևավորումը, տարբեր հմտությունների, կարողությունների և գիտելիքների ձեռքբերումը տեղի է ունենում բնական, առանց ավելորդ ու արհեստածին բաղադրիչների:

¹⁰ Ռ. Խարազյան, « Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա», Երևան, 2016:

4. Ժողովրդական երգերն ու խաղիկները դպրոցում

Հայ ժողովրդական երգերն ու խաղիկները մեր ժողովրդի հոգեկերտվածքի յուրօրինակ դրսևորումներն են, որոնց միջոցով ժողովուրդն արտացոլել է իր պատմության առավել կարևոր դեպքերը, իմաստությունը, ձգտումներն ու իդեալները: Կարելի է ասել, որ դրանք մի ամբողջ ժողովրդի կյանքի, զգացմունքների, աշխարհազգացողության հայելիներն են: Բանահյուսական ստեղծագործությունները ժամանակի ընթացքում փոփոխվել, զարգացվել և հարստացվել են բազմաթիվ անանուն հեղինակների կողմից, ինչպես նաև իրենց արտացոլումն են գտել գեղարվեստական գրականության մեջ: Բանահյուսության շատ թեմաներ, սյուժեներ ու կերպարներ մշակվել և ընդհանրացվել են՝ դառնալով բազմաթիվ գրողների արժեքավոր ստեղծագործությունների հենասյուները: Այդպիսի գրողներից են Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, ովքեր իրենց բալլադների, հեքիաթների ու պոեմների հիմքում դրել են ժողովրդական բառ ու բանը, երգն ու խաղիկը: Աներկբա է, որ գեղարվեստական խոսքի հիմնական հատկանիշներից մեկն այն է, որ ունի գեղագիտական արժեք: Գրողի գերխնդիրն է իր ստեղծագործության միջոցով ազդել ընթերցողի հոգեկան աշխարհի, զգացմունքների վրա: Այստեղ գրողին օգնության են հասնում լեզվի ոճաարտահայտչական հնարավորությունները, ինչու չէ նաև ժողովրդական բանահյուսությունը: Հենց այս հնարավորություններով է պայմանավորվում այս կամ այն գրողի ինքնատիպությունը, նրա ձեռագիրը: Հովհ. Թումանյանը հաճախ է դիմել ժողովրդական բանահյուսությանը, փնտրել ու գտել ժողովրդի ծոցից դուրս եկած գոհարներն ու դրանք ապրեցրել իր ստեղծագործություններում: Ամենայն հայոց բանաստեղծը իր ստեղծագործություններում անկրկնելի արվեստով արտահայտել է հայ ժողովրդի բնավորությունը, հոգեբանությունը, մտածելակերպը, նվիրական իղձերն ու գեղեցիկի ձգտումը, աշխարհի մասին պատկերացումները: Մեծ բանաստեղծի արարչագործության ակունքները ժողովրդական բանահյուսության մեջ են, այստեղից է նաև հարուստ բառապաշարը, առածների ու ասացվածքների, առակների ու ավանդությունների զարմանահրաշ իմացությունը: Ծնվելով Լոռվա բնաշխարհում, ապրելով մեծ նահապետական ընտանիքում՝ Թումանյանը սնվել է մարդկային բարձր արժեքներով, մաքրամաքուր բնության ու առաքինի մոր՝ Սոնայի տված բանահյուսական գոհարներով, հայ ժողովրդի բառ ու բանով, երգ ու զրույցով:

Պիտարկենք Թումանյանի «Անուշ» պոեմի մեջ առկա բանահյուսական պատարիկները: Պոեմի նյութը վերցված է գյուղական կյանքից . դեպքերը տեղի են ունենում Լոռիում: Պոեմը կառուցված է նախերգանքից ու 29 երգից: Նախերգանքում նախապատրաստվում է գալիք ողբերգությունը: Պոեմի I, II, III մասերում Թումանյանը վերհիշում է Լոռու բնությունը, մարդկանց, խոսում իր սիրո ու կարոտի մասին, իսկ IV-ից մինչև վերջ՝ Անուշի և Սարոյի սիրո մասին է: Անուշն ու Սարոն սիրում են իրար: Մի հարսանիքի ժամանակ Սարոն, տեսնելով Անուշին, մոռանում է օրենք ու աղաթ, գետին է զարկում ընկերոջը՝ Մոսիին, Անուշի հետ փախչում սարերը: Պոեմում ներկայացված են ժողովրդական մի շարք սովորույթներ՝ հարսանիքի, թաղման, Համբարձման (ջանգյուլում) տեսարաններում: «Հայոց բանաստեղծությունն այն խո չէ, որի մեջ Հայաստանի ու հայի անուն կա, որի մեջ ազգասիրության քարոզներ կան, Մասիս ու Արաքս կա, այլ այն, որի մեջ հայի հոգի կա, հայի շունչ կա, հայի վիշտ կա, հայի ուրախություն, հայի սովորություն, հայի զգացմունք»¹¹: Բանաստեղծը պոեմի հիմքում դրել է սիրո մի ողբերգական պատմություն, վերակերտել մի ամբողջ աշխարհ, ինքնաբուխ շարժման մեջ դրել նահապետական կյանքն իր ներքին օրենքներով ու հակասություններով, իր գրավիչ ու ողբերգական կողմերով: Ահա թե ինչու «Անուշին» անդրադարձող բոլոր գրականագետները միաբերան հաստատում են, թե նահապետական կյանքի դառնություններն ու ժողովրդի հոգու գեղեցկություններն ուրիշ ոչ մի ստեղծագործության մեջ չեն հասել այնպիսի կատարելության, ինչպես «Անուշ» պոեմում: Ահա թե ինչու ռուս հայտնի բանաստեղծ, հայ պոեզիայի քաջագիտակ Վալերի Բրյուսովը «Անուշն» անվանել է հայկական կյանքի հանրագիտարան: Պոեմում ամենագունեղ գույներով հեղինակը նկարագրում է Համբարձման ծեսը, որը դառնում է պոեմի համակարգը միավորող կոմպոզիցիոն բաղկացուցիչը՝ յուրօրինակ բեմական տարր, որտեղ ծավալվում, որի մեջ «առնվում են» ճակատագրով կանխատեսված գործողություններ: Սյուժետային արտաքին մանրամասները ներքին թելերով և կանխագուշակման տարրերով միահյուսվում են Համբարձման տոնի խորհրդին: Նվարդ Թումանյանի վկայությամբ Համբարձումը եղել է Թումանյանի ամենասիրած տոնը, այդ է պատճառը, որ տոնի առանցքը կազմող և ոչ մի մանրամասն չի վրիպել հեղինակի ուշադրությունից. «Առավոտ վաղ վեր էր կենում, պահարանից հանում էր բոլոր՝ մոտ երկու տասնյակ մեծ ու փոքր ծաղկամաններ, լցնում հատկապես դաշտի ու սարի պեսպես ծաղիկներով և դնում սենյակների բոլոր սեղաններին ու անկյուններում: Այս օրվա հետ կապված զանազան ավանդություններ էր կարդում, ջանգյուլումի քառյակներ ասում: Երբ տրամադրությունը լավ էր լինում ու

¹¹ «Հովհ.Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ», Երևան, 1969, հատոր 2, էջ 299:

ժամանակ էր ունենում՝ վիճակախաղ էր բացում: Սեդիկն էր վիճակ հանողը»¹²:
 Բանահյուսական մի յուրօրինակ գանձ է, սիրո անօրինակ պատկեր նախերգանքի
 երգը:

<p>Բազմած լուսնի նուրբ շողերին, Հովիթեին թըռչելով Փերիները սարի գըլխին Հավաքվեցին զիշերով:</p> <p>— Եկե՛ք, քույրե՛ք, սեզ սարերի Չըքնաղագեղ ոգիներ, Եկե՛ք, ջահել սիրահարի Մերը ողբանք վաղամեռ:</p> <p>Օխտն աղբյուրից ջուր է առել Կույս սափորով, լուռ ու մունջ, Օխտը ծաղկից ծաղիկ քաղել, Կապել սիրո ծաղկեփունջ:</p>	<p>Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛ կ</p>	
	<p>Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել, Խընդիրք արել աստղերին, Փափագ սըբտով խընդիրք արել՝ Բարի ժըպտան իր սերին...</p> <p>Ափսո՛ւս, Անո՛ւշ, սարի ծաղիկ, Ափսո՛ւս իգիթ քու յարին. Ափսո՛ւս բոլիղ թելիկ-մելիկ, Ափսո՛ւս եղ ծով աչքերին...: Ու նըրանց հետ՝ ցող-արցունքով Լըցված սըբտերն ու աչեր Մարի ծաղկունք տըխտը սյուքով Հառաչեցին են զիշեր:</p> <p>— Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛ կ, Վո՛ւշ քու սերին, քու յարին... Վուշ-վո՛ւշ, Մարո՛ւ, վուշ-վո՛ւշ, իգի՛թ, Վո՛ւշ քու սիրած սարերին...</p>	<p>— Եկե՛ք, քույրեր, սեզ սարերի Չըքնաղագեղ ոգիներ... Ու փերիներն էսպես տըխտը Երգում էին ողջ զիշեր:</p> <p>Կանչում էին հըրաշաի Հընչուններով դյութական, Ու հենց շողաց ցուքն արևի՝ Անտես, անհետ չըբացան:</p> <p>Խոր սուզվեցին ական աղբյուրի, Մըտան կաղնին հաստաբուն, Ու լեռնային վըտակների Ալիքները պաղպաջուն:</p>
		

Այսպիսով, կարող ենք փաստել, որ սիրային այս դրամատիկ պատմության մեջ
 օգտվելով ժողովրդական բանահյուսությունից՝ հեղինակը պատկերն ու խոսքը
 դարձրել է ավելի զգայուն, ներկայանալի՝ ընթերցողի առաջ բացելով նահապետական
 գյուղի ռեալիստական պատկերն ու սիրո դրսևորումները: Սիրային երգերը պոեմին
 տվել են միս ու արյուն, խոսքն ազատել չորությունից ու երկարաբանությունից՝ իրենց
 իմաստային նրբերանգներով մտքին տալով կենդանություն: «Անուշ» պոեմի
 դաստիարակչական նշանակությունը մեծ է նաև որպես ուսումնական նյութ: Հարկ է,
 որ պոեմի ուսուցման ժամանակ սովորողը հնարավորություն ունենա խորությամբ
 հասկանալու թե՛ սյուժեն, թե՛ գաղափարը, և հեղինակի ասելիքը տարածամանակյա
 հարթության մեջ, քանի որ թունայանական խոսքը երբեք չի հնանում, այն հավերժ է
 և ունակ է դաստիարակչական մեծ ներգործություն ունենալ, ձևավորել մատաղ
 սերնդի բարոյական պատկերացումներն աշխարհի ու մարդկանց մասին, իսկ ահա
 բանահյուսական պատառիկներն առավել մոտեցնում են ժողովրդական պարզ ու

¹² Ն. Թումանյան, «Հուշեր և գրույցներ», էջ 45:

չհղկված տրամադրությունները՝ ընթերցողի առաջ բացելով իրական կյանքն ու զգացմունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր կատարած ուսումնասիրությունների վրա հենվելով՝ հանդես գանք մի քանի դիտարկումներով.

Կարծում ենք, թե՛ կրտսեր, թե՛ միջին դպրոցականների համար հայ ժողովրդական բանահյուսական արժեքներին ծանոթացնելը, դրանց միջոցով սովորողներին դաստիարակելն ու կրթելն օրախնդիր է: Այսպես մենք դպրոցականներին առավել ենք մոտեցնում հայ ժողովրդի ազգային ակունքներին, կատարում նրանց մեջ ազգային ու համամամարդկային արժեքների սերմանում: Ժողովրդական բանահյուսությունն արտացոլում է ազգային մշակույթը, ժողովրդի բառ ու բանը: Այս արդար ու անմշակ ժողովրդական խոսքը սերնդեսերունդ փոխանցվում և մտնում է ազգի գենի մեջ՝ ամբողջացնելով այն կրողների ազգային դիմագիծը և հարուստ նյութ հանդիսանալով նաև գեղարվեստական գրականության համար: Բանահյուսական ժառանգության արժեքներ են բոլոր ժանրերն ու թեմաները, դրանք արտահայտում են թե՛ ժողովրդի լեզվամտածողությունը, թե՛ զգացմունքայնությունը, թե՛ ազգային յուրատիպությունը: Դրանք մշտապես մեր ժողովրդի համար եղել են նեցուկ, հոգու ընկեր, սպեղանի:

Կարծում ենք, որ ժողովրդական բանարվեստի այս գոհարները որևէ պարագայում չպետք է թողնվեն անխնամ, դրանք պիտի երգվեն, ուսուցանվեն, հրատարակվեն՝ ցույց տալով հայ ժողովրդի հարատևությունն ու մեծարժեք մշակութային ժառանգությունը:

Հարկ է նշել, որ ժողովրդական բանարվեստի ուսուցումը հիմնական դպրոցում իրականացվում է ողջ ամբողջապես. դրանք պատառիկներ են կամ մշակումներ: Ուստի կարևոր ենք համարում հենց մատաղ սերնդի մեջ արմատավորել մեր բառ ու բանը հենց մաքրամաքուր ակունքից՝ ի դեմս մեծագույն բանահավաքների, ասացողների, բանասերների ջանքերով մեծ հասած գոհարների:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Ղանալանյան, Հայ գրականությունը և բանահյուսությունը, Երևան, 1985:
2. Ա. Ղանալանյան, «Առածանի», Երևան, 1960:
3. Ռ. Խարազյան, « Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա», Երևան, 2016:
4. «Հովհ.Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ», Երևան, 1969, հատոր 2:
5. Ն. Թումանյան, «Հուշեր և գրույցներ»,
6. Դ. Գասպարյան, Հայ բանահյուսությունը:
7. <https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hayoclezu%20&%20grakanutyun/2013%284%29.pdf>
8. Կ. Դ. Ուշինսկի, «Մանկավարժական ընտիր երկեր», Երևան 1981:
9. Ушинский К.Д. Педагогические идеи. – М.; 1971.
10. Землянская Е. Н., Теория и методика воспитания школьников: учебник и практикум для СПО. М., издательство Юрайт, 2019.

Շնորհակալություն ուշադրության համար

